RSC REGIONAL STUDIES CENTER

STAFF ANALYSIS

Vol. 5 No. 9 | April 2016

«Քառօրյա» պատերազմի դասերը

Հայկակ Արշամյան

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի վաղ առավոտյան Ադրբեջանը լայնածավալ գրոհ սկսեց Լեռնային Ղարաբաղի հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շփման գծում: Ադրբեջանական կողմն աննախադեպ զինուժ և ռազմական տեխնիկա էր կենտրոնացրել երկու ուղղություններում, որի նպատակն էր՝ հյուսիսից և հարավից կայծակնային հարձակումով ԼՂՀ ներխուժելը և մեծ տարածքներ ձեռք բերելը, ինչով կպարտադրեր ԼՂՀ-ին ու Հայաստանին գնալ տարածքային զիջումների ու կփոխեր ստատուս-քվոն: Մյուս կողմից, Ի.Ալիևը սեփական ժողովրդին ցույց կտար, որ Ադրբեջանն ունակ է վերադարձնելու կորսվածը և կշեղեր հանրությանը ներքին ճգնաժամից: Միևնույն ժամանակ, տպավորությունն այնպիսին էր, որ Ադրբեջանն իրեն տրված շատ քիչ ժամանակ ուներ: Այստեղ երկու դիտարկում կարելի է անել: Կամ որոշ աշխարհաքաղաքական խաղացողներ տվել էին իրենց համաձայնությունը, բայց որոշակի ժամկետներ սահմանել, կամ էլ՝ Ադրբեջանի համար ինչ-ինչ ոչ բարենպաստ զարգացումներ էին սպասվում, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման, ինչպես նաև՝ Ալիևների ընտանիքի օֆշորային սկանդալի առումով, ինչն էլ դրդեց Ադրբեջանի կողմից վաղուց նախապատրաստվող հարձակումն իրականացնել հենց այդ օրերին: Ընդհանրապես, ԼՂ հակամարտության սրման հետևանքով անտեսվեց «Պանամայի փաստաթղթեր» անվանումը ստացած օֆշորային սկանդալը (արտահոսքն սկսվեց ապրիլի 3-ին), որի մեջ ներգրավված էր ոչ միայն Ալիևը, այլև տարբեր երկրների ղեկավարներ՝ այդ թվում նաև ՌԴ նախագահ Վ. Պուտինը: Ընդ որում, ՌԴ նախագահի խոսնակ Պեսկովը օրեր առաջ զգուշացրել էր, որ Վ.Պուտինի դեմ Արևմուտքի կողմից նախապատրաստվում է տեղեկատվության արտահոսք: Դեպքերի ընթացքը պարզ ցույց տվեց, որ հարձակմանը նախորդել էր ադրբեջանական կողմից ամիսներ տևած լուրջ նախապատրաստություն՝ հետախուզություն, հայկական դիրքերի լուրջ ուսումնասիրություն, հատուկ ջոկատայինների ներգրավում, ծանր տեխնիկայի կենտրոնացում: Սրան պետք է ավելացնել նաև վերջերս ռուսական կողմից Ադրբեջանին տրամադրված զանգվածային ոչնչացման զինատեսակներ համարվող արդի հրանետային և հրթիռային համակարգերի կիրառումը, ինչը խոսում է այն մասին, որ ադրբեջանական զինվորականները բավական երկար մարզվել են այս համակարգերը օգտագործելու համար: Նույնը վերաբերում է իսրայելական անօդաչու սարքերի կիրառմանը, որը նույնպես ենթադրում է որոշակի պատրաստվածություն:

Փաստացի, այս պատերազմը 1994թ. կնքված զինադադարից հետո ամենալայնամասշտաբ ռազմական գործողությունն էր: Ի վերջո, ադրբեջանական կողմի բոլոր հարձակումները կասեցվեցին ու ճնշվեցին Լեռնային Ղարաբաղի պաշտպանական բանակի կողից և ապրիլի 5-ի կեսօրին ժամանակավոր հրադադար հաստատվեց՝ կապված ԵԱՀԿ Մինսկի խմբի Վիեննայում նույն օրը հանդիպման հետ:

Ըստ էության, «քառօրյա» պատերազմը բազմաթիվ դասեր ունեցավ հայկական կողմի համար:

Ամենակարևոր ու հիմնական արդյունքն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի պաշտպանական բանակը ցույց տվեց, որ ունակ է դիմագրավելու

մի քանի անգամ գերազանցող ադրբեջանական բանակին: Չնայած զինատեսակների ու թվաքանակի ադրբեջանական գերակշռությանը, հայկական բանակն ապացուցեց, որ պատերազմներում մարդկային գործոնը դեռևս մնում է ամենակարևորներից մեկը:

Պատերազմի սանձազերծման առաջին իսկ ժամերից երկրում մի կողմ դրվեցին բոլոր ներքաղաքական տարաձայնությունները և Հայաստանի բոլոր քաղաքական ուժերն իրենց աջակցությունը հայտնեցին հայոց բանակին ու պատրաստակամություն հայտնեցին պաշտպանելու հայրենիքը:

Մյուս կարևոր հանգամանքը, դա հասարակությունում խուճապային տրամադրությունների բացակայությունն էր: Մարդիկ չընկրկեցին ու չվախեցան պատերազմից, ավելին՝ սկսվեց ինքնաբուխ կամավորական շարժում, որը հասավ դիրքեր ու կանգնեց ժամկետային զինծառայողների կողքին: Ընդ որում, կամավորների հոսքն այնքան մեծ էր, որ Ղարաբաղի իշխանություններն ստիպված եղան դադարեցնել ինքնակամ ճակատ մեկնողների հավաքագրումը:

Հայ հասարակությունն անմիջապես ինքնակազմակերպվեց և տարբեր տեսակի օգնության նախաձեռնություններ ձևավորվեցին: Սկսվեց ռազմաճակատի համար դրամահավաք, դեղերի, հագուստի և սննդամթերի հավաքագրում և առաջին գիծ տեղափոխում:

Պետք է ընդգծել, որ լրատվամիջոցները բավական գրագետ աշխատեցին՝ ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանում տեղի ունեցած ռազմական սրացումների: Խոսքը հատկապես սոցիալական ցանցերի մասին է, որտեղ մի քանի գրագետ ու պատրաստված բլոգերներ ու մեդիա մասնագետներ կարողացան կարգավորել լրահոսը և թույլ չտալ տարբեր տեսակի խեղաթյուրումներ:

Առողջապահության ոլորտը նույնպես ցույց տվեց, որ լուրջ պատրաստված է, և առաջին բուժօգնությունը չուշացավ. օպերատիվ կերպով Երևան տեղափոխվեցին ծանր վիրավորները, որոնց ցույց տրվեց անհրաժեշտ բուժօգնություն:

Ռուսական ծանր զինատեսակների օգտագործումը Ադրբեջանի բանակի կողմից և Ռուսաստանի՝ իրադարձություններին ուշադիր հետևելու մասին ամորֆ հայտարարությունը, ինչպես նաև՝ ռուսական դիվանագիտական շրջանակների հետագա լռությունը հասարակության որոշակի հատվածին ստիպեց հրաժարվել տարբեր տեսակի կարծրատիպերից ու առասպելաբանությունից: Ընդ որում, Հայաստանն այս պահին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) նախագահող երկիրն է, սակայն նույն ՀԱՊԿ և ԵԱՏՄ անդամ Բելառուսը մեղմ ասած նույնիսկ չեզոքություն չպահպանեց պատերազմի օրերին, ինչի արդյունքում ՀՀ-ում Բելառուսի դեսպանը հրավիրվեց ԱԳՆ բացատրություն տալու:

Հանրությունը վերջապես ընկալեց, որ լուրջ մարտահրավերները կարելի է հաղթահարել հենվելով սեփական ուժերի վրա՝ առանց կողմնակի աջակցության: Սրանով վերականգնվեց հասարակության ինքնավստահությունը, իսկ հայկական բանակը դարձավ դրա կարևոր գրավականը:

Պատերազմի ընթացքում եղան նաև լուրջ բացթողումներ: Ռազմական հակահետախուզությունը բաց թողեց ուժերի կուտակման պահը, ինչի հետևանքով մի քանի դիվերսիոն խմբեր ներթափանցեցին շմփան գծից ներս ու ապակայունացրեցին իրավիճակը, ինչն էլ հնարավորություն տվեց ադրբեջանական հիմնական ուժերին հատել շփման գիծը:

Չնայած արտաքին լուրջ մարտահրավերներին, Հայաստանի իշխանությունները շուրջ մեկ տարի զբաղված են ներքաղաքական դաշտի ամայացմամբ, սահմանադրական փոփոխություններով, երկրի կառավարման համակարգի փոփոխմամբ ու վերադասավորումներով: Ընդ որում, կառավարման համակարգի փոփոխությանը նաև լծվել էին ԼՂՀ իշխանությունները: Սա ցույց է տալիս, որ ադրբեջանական հարձակումը իրոք անսպասելի է եղել հայկական կողմից համար:

Բազմաթիվ փորձագետներ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ տարիներ շարունակ խոսում են սահմանին նոր տեխնոլոգիաներով համալրված լուրջ կանխարգելիչ համակարգեր ներդնելու անհրաժեշտության մասին, սակայն այս խնդիրն անտեսվեց, և պաշտպանական առաջին գծի դիրքերում հույսը դեռևս դրված է թիթեղյա տարաների, ականների ու փշալարերի վրա:

Ամենայն հավանականությամբ, հայկական կողմի կորուստների մեծ մասը զոհ է գնացել պատերազմի հենց առաջին օրվա ընթացքում՝ այսինքն ռազմական պատրաստականության,

ինչպես նաև պաշտպանական պրակտիկայի համադրման լուրջ խնդիրները բանակում դեռևս մինչև վերջ հաղթահարված չեն:

Վերջին տարիների զարգացումներն Ադրբեջանում և տարածաշրջանում խոսում էին պատերազմական գործողությունների մեծ հնարավորության մասին՝ Ադրբեջանին մի քանի միլիարդ դոլարի ժամանակակից զենքի վաճառքը Ռուսաստանի կողմից, այդ թվում նաև զանգվածային ոչնչացման զինատեսակների, Ալիևի և Էրդողանի ինտենսիվ հանդիպումներն ու ռազմատենչ հայտարարությունները և կողմերի հռետորաբանության կտրուկ սրացումը, Ադրբեջանում տնտեսական սուր ճգնաժամը՝ կապված նավթի գների անկման հետ, ու ներքին սոցիալական դժգոհությունները, Թուրքիայում քաղաքական ճգնաժամը, քրդական գործոնի ակտիվացումը, սիրիական ճգնաժամը, Ռուսաստանում տարբեր քաղաքական ուժերի, վերլուծաբանների, լրատվամիջոցների ակնարկները՝ Հայաստանն ու հայերին ընդդեմ Թուրքիայի օգտագործելու վերաբերյալ: Այս ամենից սակայն լուրջ եզրակացություններ չարվեցին ոչ Հայաստանում, ոչ էլ ԼՂՀ-ում:

Դիվանագիտական ոլորտում անգործության հետևանքով տեղի ունեցան լուրջ բացթողումներ՝ ԵԽԽՎ հակահայ որոշումները, Հայաստանի՝ ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներին միանալը, որը հանգեցրեց երկրի միջազգային մեկուսացման և որպես լուրջ գործոնի դուրս մղման, Ռուսաստանի կողմից Ղրիմի գրավման նկատմամբ դրական դիրքորոշումը և այլն:

Շուրջ երկու տարի՝ 2014-2015թթ. ողջ հայ դիվանագիտությունը զբաղված էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացով ու 100-ամյա տարելիցի միջոցառումներ կազմակերպելով, ինչի արդյունքում անտեսվեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացը: Վերջինիս առումով տեղի ունեցած հանդիպումները և բանակցային գործընթացներն սկսեցին կրել ձևական բնույթ և ավարտվում էին նույնատիպ և ոչինչ չասող հայտարարություններով:

Մյուս կողմից, Հայաստանում իշխանության բոլոր ճյուղերի ու ոլորտների գերկենտրոնացումը՝ ներառյալ դիվանագիտությունը, տնտեսությունը, ներքաղաքական կյանքը, հեռուստաթերթն ու այլ լրատվամիջոցները, ռազմական ոլորտը և այլն, հանգեցրին նրան, որ պատերազմի ընթացքում մի շարք կարևորագույն ոլորտներ անգործունակ դարձան՝ հատկապես արտաքին քաղաքականության ուղղությամբ: Ըստ էության, չհայտարարված պատերազմի պայմաններում երկրի պաշտպանության նախարարությունն ստիպված իր վրա վերցրեց արտաքին գործերի նախարարության հիմնական գործառույթները, ինչպես նաև՝ լրատվական դաշտում քիչ թե շատ հավաստի տեղեկատվության տարածումը:

- Իշխող Հանրապետական կուսակցությունը քար լռություն պահպանեց պատերազմի օրերին, իսկ երկրի խորհրդարանը նիստ հրավիրեց միայն ապրիլի 5-ին, այսինքն՝ զինադադարի հաստատման օրը: Միայն այդ օրը իշխանության որոշ ներկայացուցիչներ սկսեցին խոսել եթերով:

- Սոցիալական ցանցերում, չնայած ընդհանուր գրագետ աշխատանքին, առկա էին բացթողումներ, մանիպուլիացիաներ, սադրիչ, ոչ հավաստի և կեղծ տեղեկատվական հոսքեր:

- Ղարաբաղում զոհվեցին նաև քաղաքացիական անձինք, այդ թվում նաև երեխաներ, ինչը պետք է ստիպի լուրջ կենտրոնանալ նաև քաղաքացիական պաշտպանության վրա:

Ըստ էության այս պահին հստակ է, որ հայկական բանակը կարիք ունի նորացման՝ թե զինատեսակների, և թե բարձր տեխնոլոգիաների առումով: Մեկ այլ հրատապ խնդիր է բանակում կոռուպցիոն երևույթների իսպառ վերացումը: Սահմանին կանգնած զինվորը չի կարող իր թիկունքում ունենալ բազմամիլիոն կարողություն ունեցող գեներալներ:

Լեռնային Ղարաբաղում հայոց զինվորների թափված արյունը պետք է ամրապնդվի դիվանագիտությամբ, այլապես նման իրավիճակները նորից կրկնվելու են: ՀՀ արտաքին գործերի անգործունյա նախարարի ու մի շարք ապաշնորհ դեսպանների հրաժարականը ու նրանց փոխարինումը լուրջ պատրաստված ու նախաձեռնող դիվանագետներով դարձել է օրվա հրամայականներից մեկը: Լուրջ աշխատանքի պակաս կա նաև Ռուսաստանի դիվանագիտական շրջանակների հետ:

Ռուսաստանին պետք է հստակ հասկացնել, որ երկու կողմից մարդկային հարյուրավոր զոհերի ու վիրավորների հիմնական պատճառը նրա վերջին տարիներին Ադրբեջանին նորագույն զենքերի վաճառքն է: «Քառօրյա» պատերազմը կարելի է դիտարկել որպես Ադրբեջանի կողմից հետախուզական հարձակում կայծակնային հաղթանակի նպատակով, որն ըստ էության տապալվեց, բայց այն միտում ունի վերածվել ավելի լուրջ պատերազմի, ինչն էլ լիովին կապակայունացնի իրավիճակը տարածաշրջանում:

The **Regional Studies Center** (RSC) is an independent think tank conducting a wide range of objective research and analysis, and implementing a number of educational and policy-related projects.

As a leading think tank based in Armenia, the RSC conducts research and analysis and develops policy initiatives in support of political and economic reform and conflict resolution in the broader South Caucasus region. Over the longer term, the RSC strives to elevate political discourse, deepen civic activism and broaden engagement in the public policy process.

Regional Studies Center (RSC)
Yerevan, Armenia

www.regional-studies.org